

ՏՆԱՅԻՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (IN-HOME SUPPORTIVE SERVICES) ԾՐԱԳԻՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՂԻՆ՝ ՇԱԲԱԹԱԿԱՆ ԺԱՄԵՐԸ ԳԵՐԱԶԱՆՑԵԼՈՒ ԲԱՑԱՌՈՒԹՅԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(ADDRESSEE)

Վարչաշրջան՝ _____

Ծանուցման ամսաթիվը՝ _____

Մատակարարողի անունը՝ _____

IHSS գրասենյակի հասցեն՝ _____

IHSS գրասենյակի հեռախոսահամարը՝ _____

Ում՝ **Տնային աջակցության ծառայությունների (IHSS) մատակարարողին**

Այս ծանուցումը տեղեկացնում է ձեզ, որ առավելագույն շաբաթական ժամերը գերազանցելու բացառության ձեր ստացողի խնդրանքը մերժվել է ծառայության _____ ամսվա համար: Հետևաբար մի աշխատեք այս լրացուցիչ ժամերը: ^{ԱՄԻՍ}

Եթե դուք արդեն աշխատել եք այդ լրացուցիչ ժամերն, ապա ձեզ կվճարեն աշխատած ժամերի համար, սակայն դուք խախտում կստանաք: Այս խախտման համար տուգանքը կախված կլինի ձեր ստացված խախտումների քանակից: Դուք տեղեկացում կստանաք, որը տեղեկացնում է ձեզ ձեր խախտման ու որևէ կիրառելի տուգանքի մասին: Դուք նաև տեղեկություն կստանաք այն մասին, ինչպես կարող եք վարչաշրջանի վերանայում խնդրել ձեր խախտման համար:

Բացի դրանից, եթե արդեն աշխատել եք այդ ժամերն, ձեր ստացողը պետք է փոփոխի ձեր աշխատանքային ժամերն աշխատած, սակայն չհաստատված բացառության ժամերի քանակով մինչև ամսվա վերջ: Մա արվում է հավաստիանալու համար, որ դուք կամ այլ մատակարարող(ներ)ը, որոնք ստացողը կարող է ունենալ, չեն գերազանցում իր ամսական հաստատված ժամերը: Եթե ձեր ստացողը չփոփոխի ձեր աշխատանքային ժամերը մինչև ամսվա վերջ, դուք չեք վճարվի IHSS ծրագրի կողմից այդ լրացուցիչ ժամերի համար: Դրա փոխարեն ձեր ստացողը պատասխանատու կլինի որևէ ծառայության ժամերի վճարման համար, որոնք գերազանցում են իր ամսական հաստատված ժամերը:

Եթե լրացուցիչ հարցեր ունեք այս ծանուցման վերաբերյալ, ապա կարող եք դիմել ձեր վարչաշրջանի IHSS գրասենյակ վերոնշյալ հեռախոսահամարով: